*Ընդունելության քննություն*
*Հասարակական գիտություններ ( 10-րդ դասարան )*
*2025-2026 ուստարի*

*23. 06. 2025*

*Ազգանուն, անուն, հայրանուն* ______________________________________________

*Դպրոց* ________________________________________________________________

| Ծածկագիր | |
|---|---|

Կտրման գիծ-----------------------------------------------------------------------------------------------------

| Ծածկագիր | |
|---|---|

Հրահանգներ.

1. Ուշադիր ընթերցեք բոլոր հրահանգները
2. Ուշադիր ընթերցեք բոլոր առաջադրանքների պահանջները
3. Հստակ և առանց ջնջումների լիցրեք ձեր նախընտրած պատասխանները
4. Գրեք ընթեռնելի ձեռագրով
5. Նախքան աշխատանքը հանձնելը ևս մեկ անգամ ստուգեք այն:

Աշխատանքի տևողությունը 150 րոպե:

| | |
|---|---|
| **Միավորների ընդհանուր գումարը** | |
| **Գնահատականը 20 միավորային համակարգով** | |
| **Ստուգողի ազգանունը և ստորագրությունը** | |
| **Առարկայական հանձնաժողովի նախագահ** | |
| **Վերանայման (վերջնական) գնահատական** | |
| **Վերանայման հանձնաժողովի նախագահ** | |

## <u>Հայոց պատմություն</u> (10 միավոր)

1. Ո՞վ էր 1920թ. մայիսյան ապստամբության ղեկավարը: ( 0.5)
   ա.Սարգիս Կասյանը　　　　գ. Ավիս Նուրիջանյանը
   բ. Ասքանազ Մռավյան　　　　դ. Սարգիս Մուսայելյանը
2. Ե՞րբ է բացվել Երևանի պետական համալսարանը և ո՞վ էր համալսարանի առաջին ռեկտորը: (0.5)
   ա. 1919թ., Աշոտ Հովհաննիսյան　　　　գ. 1919թ., Յուրի Ղամբարյան
   բ. 1920թ., Հովսեփ Օրբելի　　　　դ. 1920թ, Լևոն Շանթ
3. Խորհրդային Միության կրկնակի հերոսի կոչման արժանացել է . (0.5)
   ա. Համազասպ Բաբաջանյանը　　　　գ. Հունան Ավետիսյանը
   բ. Նելսոն Ստեփանյանը　　　　դ.Նվեր Սաֆարյանը
4. Ու՞մ են պատկանում հետևյալ խոսքերը և ի՞նչ առիթով է այն հնչեցվել. (0.5)
   «Մենք կործանեցինք բռնության շղթան, իսկ այժմ եկել է ժամանակը ՝ փշրելու տգիտության շղթան»:
   ա. Ալեքսանդր Խատիսյան՝ համալսարանի բացման հետ կապված,
   բ. Հովհաննես Քաջազնունի՝ «դպրոցների մասին» օրենքի ընդունման հետ կապված,
   գ. Համո Օհանջանյան՝ կոնսերվատորիայի բացման հետ կապված,
   դ. Ալեքսանդր Մյասնիկյան՝ բժշկական ինստիտուտի բացման հետ կապված:
5. Նշվածներից ո՞վ է Սասունցի Դավթի հայտնի արձանի հեղինակը . (0.5)
   ա. Սերգեյ Մերկուրովը　　　　գ. Երվանդ Քոչարը
   բ. Կառլեն Նուրիջանյանը　　　　դ. Արա Սարգսյանը
6. Ե՞րբ է սկսել իրականացվել «Օղակ» ռազմական գործողության ծրագիրը . (0.5)
   ա. 1991թ. ապրիլ-մայիս　　　　գ. 1990թ. ապրիլ-մայիս
   բ. 1990թ. մարտ-ապրիլ　　　　դ. 1991թ. մարտ-ապրիլ
7. Նշվածներից ո՞վ չի մասնակցել 1992թ. մայիսի 9-ի Շուշի քաղաքի ազատագրմանը. (0.5)
   ա. Արկադի Տեր-Թադևոսյանը　　　　գ. Թաթուլ Կրպեյանը
   բ. Աշոտ Ղուլյանը　　　　դ. Վարդան Ստեփանյանը
8. 1921թ. հուլիսի 5-ին հայկական ո՞ր տարածքը անօրինական ձևով չմիացվեց Խորհրդային Հայաստանին: (0.5)
   ա. Նախիջևան　　　　գ. Արցախ
   բ. Կարս　　　　դ. Ջավախք
9. Հայտնի պայմանագրերը կամ համաձայնագրերը համապատասխանեցնել կնքման տարեթվի և գործիչների հետ: (1.0)

| Պայմանագիր, համաձայնագիր | Տարեթիվ | Գործիչ |
|---|---|---|
| 1.Երևանի | 1. 1921թ. հոկտեմբերի 13 | 1. Դրաստամատ Կանայան |
| 2.Բաթումի | 2. 1920թ. օգոստոսի 10 | 2. Ավետիս Ահարոնյան |
| 3.Կարսի | 3. 1920թ. դեկտեմբերի 2 | 3. Ասքանազ Մռավյան |
| 4.Սևրի | 4. 1918թ. հունիսի 4 | 4. Ալեքսանդր Խատիսյան |

| | | |
|---|---|---|
| 1 | | |
| 2 | | |
| 3 | | |
| 4 | | |

10. Կատարել համապատասխանեցում.(1.0)

Ա. Հովհաննես Իսակով — 1.զրահատանկային զորքեր

Բ. Համազասպ Բաբաջանյան — 2. ռազմաօդային զորքեր

Գ. Արմենակ Խանփերյանց — 3. ինժեներական զորքեր

Դ. Սերգեյ Ագանյան — 4. հրետանային զորքեր

5. ծովային զորքեր

| Ա | Բ | Գ | Դ |
|---|---|---|---|
| | | | |

11. Դեպքերը դասավորեք ժամանակագրական հաջորդականությամբ: (1.0)
   1. «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» փաստաթղթի ընդունումը,
   2. Սումգայիթյան ողբերգությունը,
   3. Լեռնային Ղարաբաղի անկախության հռչակագրի ընդունումը,
   4. Հայաստանի ՄԱԿ-ի անդամ դառնալը:

| | | | |
|---|---|---|---|
| | | | |

Դեպքերը դասավորեք ժամանակագրական հաջորդականությամբ: (1.0)

1. Համազանգեզուրյան երկրորդ համագումարը,
2. ԽՍՀՄ կազմավորումը,
3. Հայաստանի խորհրդայնացումը,
4. Փետրվարյան ապստամբության սկիզբը:

| | | | |
|---|---|---|---|
| | | | |

12. Ներկայացրեք Մոսկվայի պայմանագիրը՝ ե՞րբ է կնքվել, ո՞ր պետությունների միջև, ի՞նչ որոշումներ են կայացվել: Մեծ մասամբ որ՞ պայմանագրին է կրկնօրինակել Մոսկվայի պայմանագիրը: Ինչու՞ Հայաստանի ներկայացուցիչները չմասնակցեցին Մոսկվայի պայմանագրի կնքմանը: (2.0)

## <u>Համաշխարհային պատմություն</u> (5.0 միավոր)

1. Փորձիր ստորև առկա սանդղակում ներկայացնել 5-6 տարբերություններ 1950-1980-ական թթ.-ին սոցիալիստական համակարգի երկրների և արևմտյան երկրների միջև: (1,5)

| Սոցիալիստական համակարգի երկրներ | Արևմուտքի երկրներ |
|---|---|
| | |

2. Կատարեք համապատասխանեցում. ( 1,0)

ա.Իոսիֆ Ստալին
բ. Միխայիլ Գորբաչով
գ.Նիկիտա Խրուշչով
դ. Լեոնիդ Բրեժնև

1.վերափոխում
2. լճացում
3. վերակառուցում
4. անհատի պաշտամունք 5. մեծ թռիչք
6. ձնհալ

| ա- | բ- | գ- | դ- |
|---|---|---|---|

3. Ե՞րբ է սկսել գործել Եվրոպական Միությունը (ԵՄ): (0,5)

1. 1994թ. 2. 1991թ. 3. 1993թ. 4. 2003թ.

4.Ի՞նչ է սառը պատերազմը, ե՞րբ է այն սկսվել: Ներկայացրեք սառը պատերազմի ժամանակ տիեզերքի նվաճման հետ կապված երկու հակադիր բևեռների միջև սկսված մրցավազքը: Ներկայացրեք առնվազն երկու փաստ: (2,0)

Հասարակագիտություն (5.0 միավոր)

**1.**Ներկայացնել *ընտրությունների* էությունը: Բացատրել ընտրությունների կարևորությունը ժողովրդավարության կայացման գործում: (1.0)

2. Մեկնաբանել *քաղաքացիության* դերը անհատի և պետության փոխհարաբերությունների գործում, ներկայացնել քաղաքացիություն ձեռք բերելու գործոնները: (1.0)

3. Համեմատել մարդու *քաղաքացիական և քաղաքական* իրավունքները: Ներկայացնել յուրաքանչյուրից 2-ական իրավունք: (1.5)

4. Թվարկել *ազատ ձեռնարկատիրության* չորս  հենասյուները. մանրամասն ներկայացնել դրանցից երկուսը:  (1.5)